«Հաստատում եմ»
Հայաստանի շախմատի ֆեդերացիայի
գործադիր տնօրեն՝Ա. Գևորգյան

«02» հունվար 2025թ.

Հայաստանի տղամարդկանց 86 –րդ առաջնության
առաջին խմբի մրցաշարի

Կանոնադրություն

Անցկացման վայրը՝ ք. Երևան, Հայաստանի շախմատի ակադեմիա (Շևչենկո 34)
Ժամկետները՝ նոյեմբերի 22-ից դեկտեմբերի 3-ը:

Մասնակիցները՝ 12 մասնակից: Մասնակցության իրավունք ունեն.

- 2025 թվականի մարտի 1-ի և սեպտեմբերի 1-ի միջազգային վարկանիշների միջին ցուցանիշով 6 ամենաբարձր վարկանիշ ունեցող շախմատիստները,
- 4 շախմատիստ Հայաստանի տղամարդկանց 2025 թվականի առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարից,
- Հայաստանի մինչև 18 տարեկան պատանիների 2025 թվականի չեմպիոնը,
- մեկ շախմատիստ ֆեդերացիայի որոշմամբ՝ մինչև 18 տարեկան շախմատիստներից:

**Եթե շախմատիստներից որևէ մեկը հրաժարվում է մասնակցությունից, ապա տեղը կլրացնի հաջորդ ամենաբարձր միջազգային վարկանիշ ունեցող շախմատիստը:*
Մրցակարգը՝ շրջանային:
Ժամակարգը՝ 90 րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 30 րոպե ավելացում մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլին 30 վայրկյան ավելացում՝ սկսած առաջին քայլից:

1-3-րդ տեղերը գրաված շախմատիստներն իրավունք կստանան մասնակցելու Հայաստանի տղամարդկանց 86-րդ առաջնության բարձրագույն խմբի մրցաշարին:

Լրացուցիչ ցուցանիշներ՝ հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը որոշվում են ըստ.

1. Զոնեբորն Բերգերի գործակցի,
2. սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,
3. ըստ անձնական հանդիպման արդյունքի,
4. հաղթանակների առավելագույն քանակի:

Խաղի մեկնարկից 30 րոպեից ավել ուշացած մասնակցին կգրանցվի պարտություն:
Մրցաշարի բացման արարողությունը տեղի կունենա նոյեմբերի 22-ին ժամը 15:00:
**Բացման արարողությանը բոլոր մասնակիցների ներկայությունը պարտադիր է:*

Մրցանակներ՝
1-ին տեղ՝ 250000 ՀՀ դրամ
2-րդ տեղ՝ 150000 ՀՀ դրամ
3-րդ տեղ՝ 100000 ՀՀ դրամ

Մրցանակները չեն կիսվելու և հարկվելու են ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն:
Մրցանակակիրները կպարգևատրվեն նաև պատվոգրերով:

Խաղացանկ

22.11.2025	Բացում	15:00
23.11.2025	1-ին խաղափուլ	15:00
24.11.2025	2-րդ խաղափուլ	15:00
25.11.2025	3-րդ խաղափուլ	15:00
26.11.2025	4-րդ խաղափուլ	15:00
27.11.2025	5-րդ խաղափուլ	15:00
28.11.2025	6-րդ խաղափուլ	15:00
29.11.2025	7-րդ խաղափուլ	15:00
30.11.2025	8-րդ խաղափուլ	15:00
01.12.2025	9-րդ խաղափուլ	15:00
02.12.2025	10-րդ խաղափուլ	15:00
03.12.2025	11-րդ խաղափուլ	13:00
03.12.2025	Փակում	18:00

Մրցաշարի ընթացքում բժշկի սնունդի, մարզերը ներկայացնող մասնակիցների և մրցավարների սնունդի և գիշերակացի ֆինանսավորումը կատարվում է ԿԳՄՍ «Պետական աջակցություն մարզական ֆեդերացիաներին» ֆինանսական միջոցների հաշվին:
**Մասնակիցների ճանապարհածախսը, ինչպես նաև նրանց ուղեկցող անձանց և մարզիչի բոլոր ծախսերը գործուղող կազմակերպության հաշվին են:*

Հարցերի դեպքում զանգահարել 099 440105

Գլխավոր մրցավար՝
Միջազգային մրցավար Անուշավան Առաքելյան